

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## AN E C D O T A   O X O N I E N S I A

(Շարունակութիւն և վերջ):

Այժմ բացատրենք՝ թէ հայը թարգմանելով Դիոնիսիոս Թրակացու գործը ինչ եղանակ է ընտրել։ Մենք հեշտութեամբ գործի համաձայն նկարագրած կը լինինք թարգմանչի առանձնայատկութիւնը եթէ ասելու լինինք նա չափազանց հետեւողաբար է ընթացել, ոչ միայն բառեր այլ մինչև անգամ լանկեր և համարեայ տառեր թարգմանելիս, սակայն ապացուցանելու համար լոկ այսքանը բաւական չհամարելով օրինակներ առաջ բերելով ցոյց կը տանք՝ թէ նա ինչ ճանապարհ է բռնել։ Եւ երբ ընթերցողը քննած կը լինի, թող լաւ մոտածի ինչ չափով պէտք է նկատի առնել նորա գործածութիւնը և քննութեան մէջ նրա հեղինակութիւնը։ Այդ պատճառով կարտագրենք հայերէն և յունարէն լեզուներով երկու գլուխ աւելացնելով նաև առանձին հնչիւնների այո նաև հայերէնի լանկերի ասելու եղանակը որոնք այնպէս են իրար պատկանում։ Եր տառը համաձայն է տառին։ Խնդրում եմ ընթերցողները խոր քննելով լատիներէն լեզուով ասածը, կիկերոնի մասին չմտածէին եթէ մէկը համեմատէր յունարէն ընագրի հետ, անկարող կը լինի չնկատել, որ հեշտ է բաւական ճշտութեամբ վերականգնել բնագիրը, որովհետեւ հայը իսկապէս յունարէնի ընթերցուածն է տուեր։

Փոխանակ Մերքսի քերականութիւնից առաջ բերած կտորը տալու, մենք կը վերցնենք մի երես «յաղագս մեկնութեան»-ից:

17 a. 8. Esti | de|heis| protos | lògos apo phantikos | kata| phasis  
 և | է, | մի | առաջին | բան | բաց-երեական | ստոր | ասութիւն  
 eita | apo-phasis | poi | d'alloi | pàntes | syndésmo | heis  
 ապա բաց-ասութիւն | իսկ | այլքն | ամենեքեան | շաղ-կազաւ | մի  
 anànke dé | panta | logon | apo-phantikos | ek-rêmatos | einai  
 բայց հարկէ | զամենայն | բան | բաց-երեական | նարուա-բայց | գոլ  
 է | pteseôs | rêmatoſ kai | gâr | ho-tu anthyðpu | logos | eân  
 կամ | տապալմանէ | և | քանդի | մարդոյն | բան | թե  
 mèto-estin | ê̄n | է | estai | ê̄ | allo | ti | ton | toiûton  
 ոչ | զէն | և | կամ | զեղիցին | կամ | զայլին | զայսպիսեացն  
 prostethê | u-pô | lògos | apo-phantikos |  
 առ-դիցէ | և-ևս | բան | բաց-երեական:

Մերքսը առաջ բերելով թրակացու քերականութեան համապատասխան օրինակը աւելցնումէ նաև լատինական թարգմանութեան բառացի համապատասխանող կտորը: Ես այդ մի կողմը թողի, քանի որ նա բերած օրինակին աւելի ոյժ տալ չէ կարող: Բերած հասուածի մէջ նկատումենք, որ յօւնարէնի շարադասութիւնը պահպանուած է, բացառութիւն կազմում են  
 (1) dé և gar ի թարգմանութիւնը. նախնթացում թարգմանած լինելով բայցով կամ եւ-ով կարծել են տալիս որ նոքս միայն կամ եւ-ի զօրութիւն ունին:

(2) յօդերը թարգմանելիս: Հայերէնի մէջ յօդերը թարգմանուած են ն մասնիկով:

Յունարէնում եղած տարբերութիւնները վերելի թարգմանութեան մէջ, իսկապէս առած շատ շնչին և աննշան են: Նոքս են ձլո ti ton toiûton ընթերցուածը ti toiûton-ի փախարէն: Եւ կրկին անգամ էջ ԾԽVII գրումէ Մերքսը հետեւալը:

«Ահա այս է հայերէն թարգմանութեան առանձնայատկութիւնը. հայը թարգմանել է յունարէնից վանկը վանկի տեղ գնելով, իսկ այն մասնիկները որ իր մացրենի լեզուի մէջ չէ ունեցել, կամ բաց է թողել, կամ թարգմանել է

աղատօրէն։ Սակայն ասում եմ ընթերցազներիս ։ Անի թէ ընդունելու լինին, թարգմանիցը իւր լեզուի մէջ գործ ածելու նպատակաւ չի ստեղծել և ընդունել որ բառեր, ոչ ընդհակառակը նա այնպէս է վարուել. ինչպէս լատինական անձաւակ թարգմանութիւններն են կատարուելու որոնք առանց կարմրելու յունարէն metochen լատիներէն participium (գերբայ) են թարգմանելց յուն. aitiatikén լատ. accusativum (հայցական). յուն. genikén լատ. genitivum (սեռական), և բոլորն է ընդունել են, այդպէս էլ հայ թարգմանը նոր բառեր է կազմել Դիոնիսոսի քերականութեան համար ըստ յունական տարազի և այդ բառերը յետոյ ամենագործածական բառերի շառքին են գասուել։ Եթէ մէկը հայ բընագիրը, ընդունելով որ յունարէն օրինակ չկայ, այն եղանակով թարգմանէր մի ուրիշ լեզուով, որ գործածէր այն բացառութիւնները, որոնք գտնեռումեն մասնական բառերի բառգրքերում (quae in lexicis habentur vocabulorum technicorum), նա ոչ կարող է հայերէն լեզուով եղած Դիոնիսոսի ոգուն ու առանձնայառկութեանը համաձայն թարգմանել և ոչ էլ կարող է քննութեան գործին նպաստող հաշուել։ Ուրախնեու եթէ լու ըմբռնած լինի նոյն միտքը կըստանայ թէ հայերէնից և թէ յունարէնից։ Այդ պատճառով ինչ լեզուով էլ կուզես թարգմանել հայերէնը բոլորովին անօգուտ է, հայերէնը պէտք է միայն նրա համար տռաջարկել, որ նրանով յունարէն բնագրի առանձին առանձին բառերը ամենայն ճշտութեամբ արտապատուէին։

§ 22 Նախնթաց § 2-ում առաջադրած պայմաններից երրորդըն էր, որ մենք պէտք է թարգմանութիւնից մի մաքուր օրինակ ունենանք։ Հայերէն լեզուով Ստորոգութեանց և Յաղագըս մեկնութեանի համար իմ համեմատած և գործ դրած ձեռագրերս հետևեաներն են.

(ա) Տպագրած Դաւիթ Անյաղթի Փիլիսոփայական և միւս գործերի մի հրատարակութիւնը տպուած Վենետիկում 1833 թ. Միթարեանների տպարանում։ Այդ հրատարակութեան

Էջ 359—408 ի մէջ գտնւում է Արիստոտելի Ասորոգութիւնք գործը մեկնութեան հետ միասին Գործի վերջի յիշատակարանն է. «կատարեցաւ աասն ստորոգութիւնն ասացեալ յեռամեծէն Արիստոտելէ որ ասի ըստ յունաբէն ձայնի կատեղօրիաս»: Խակ գործի վերնագիրը շատ պարզ է, «Ասորոգութիւնք Արիստոտելի»: Այսեղ չենք գտնում Գալթի անուան յիշառակութիւնը, բայց յիշեալ մասի յաջորդ մասում 409—458 էջում՝ նոյն գործի 96, 28-ի վերջից, որտեղից սկսած իւրաքանչիւր հատուածին յաջորդումէ իւր մեկնութիւնը: Վերնագիրն է. «Ասորոգութիւնք Արիստոտելի թարգմանեալ և մեկնեալ ի Դաւթէ»:

Մեկնութեան առաջի մասը բաց է թողնուած Վենետիկի ձեռագրերի մէջ, սակայն վերջերում իմ գործ ածած և համեմատած շատ ձեռագրերում նա գտնւումէ:

Այս Վենետիկեան տպուած օրինակը ես նշանակել եմ Ա. յաւելուածում Վ. տառով: Նա հիմնուած է սկսած 349—408 էջերից երեք ձեռագրերի վրայ սրուցից մէկը բոլորագիր է և ծագումէ Հայոց 859 Փրկչի 1411 թուից, միւսը նօտրագիր է ծագած Հայոց 1136 թ. Փրկչի 1688, մինչդեռ երրորդի ժամանակը յայտնի չէ. սա էլ է նօտրագիր: Վենետիկի հրատարակութեան էջ 409—458-ի մէջ տպուած է նաև մեկնութիւնը և այդ գէպքում երեք ձեռագրերից օգտակար է եղել միայն առաջինը: Պէտք է նկատել, որ հին ձեռագրերում թէ բնագիրը և թէ մեկնութիւնը գտնւումն իբրև իրար յաջորդող, մինչդեռ նոր ձեռագրերի մէջ բնագրին չի հետեւում անմիջապէս մեկնութիւնը: Նոյն Վենետիկի հրատարակութեան մէջ յաղագում մեկնութեանի բնագիրը տպուած է էջ 461—486-ում: Վերնագիրն է «Ակիզբն և նախագրութիւն գրոցն որ ասի ըստ յունեայ Պէրիառմէնիաս և Հայերէն յաղագում մեկնութեան արտադրեալ ի մեծ իմաստնոյն Արիստոտելի»:

Հետեւեալը էջ 487—553-ում նոյն բնագրի մօտ, հատուած առ հատուած յաջորդումէ մեկնութիւնը, որը դար-

Ճեալ բաց է թողած 17 ա. 25—20 ի. 14. Եջերում: Այդ  
մասի վերնագիրն է. «Պէրիարմէնիաս Արիստոտելի  
թարգմանեալ և մեկնեալ ի Դաւթէ»:

Արա համար գործ դրած ձեռագրերը համարեա նոյն են եղել  
ինչ Ստորոգութեանց համար. միայն բնագրի համար ունեցել են  
նուե մինօտրագիր ձեռագրերի 1688 թ. և մի ուրիշ նօտրագիր  
1710 թ. բնագրի և մեկնութեան համար 1411 թ. ձեռա-  
գիրը:

Այդ ձեռագրերի տարբեր ընթերցուածները երբեմն նշա-  
նակուած են, սակայն առանց գասաւորութեան, տպած բնա-  
գրի լուսանցքում: Արա համար ես իմ Ա յաւելուածում  
նշանակումեմ ՎՕ:

§ 23. (b) Այժմ գառնանք Պարիզի, Երուսաղէմի և Պալիայի  
ձեռագիր աղբիւրներին: Պարիզի ազգային Մատենագարանում  
ես աչքի եմ անցրել մի քանի հայերէն ձեռագրեր, յատկապէս  
երկուոր. հայերէն ձեռագր. թ. 105 և 106, որոնց ես Ա յաւել-  
ուածում Ծ և Է-ով եմ նշանակել, բայց համեմատութեան  
համար գրել եմ պարզ Paris MSS կամ P. MSS. Ստորոգութեանց  
բնագիրը առանց մեկնութեան բռնումէ թղ. 89—118 թիւ 105:  
Բնագիրը հանգերձ մեկնութեան բռնումէ թղ. 252—356 թիւ  
106: Թիւ 106 ձեռագիրը աւելի հին է և հաւանականօքէն  
գրած է տասնեհինգերորդ գարում: բայց գրած է վաս. թիւ  
105 աւելի ուշ ժամանակի է պատկանում: բայց գրած է աւելի  
մաքուր:

Նոյն ձեռագրերը պարունակումեն նաև «յաղագո մեկնու-  
թեան»-ը: Թիւ 106 տալիս է բնագիրը մեկնութեամբ հանգերձ  
թղ. 97—164. Թիւ 105 տալիս է միայն բնագիրը. թղ. 119—  
135 Վ.

Այս երկու ձեռագրերն էլ վերագրումեն Դաւթին: Թէ թարգ-  
մանութիւնը և թէ մեկնութիւնը:

§ 24. Երբ. 1887 թւին ես համեմատեցի այդ ձեռագրերը մի  
քիչ անհանգիստ էի: որ կարող է թարգմանութեան մէջ յու-  
նարէնից մի քանի տարբերութիւններ մտած լինի, որի մէջ աղ-

չատումները կատարուել էին կամ արտագրիչների կողմից կամ այն ուղղելու փորձերից, որ ձեռնարկուել են միջին դարերի լատիներէն թարգմանութեանց համեմատութեամբ։ Յոյս ունենալով պարզել այդ կէտերը և ձեռք բերել մի աւելի մոքուր ձեռագիր 1888 թւին գնացի Երուսաղէմ և համեմատեցի երկու շատ հին ձեռագրեր, որ պահպանմէին ու Յակովի վաճիքի պատրիարքարանի մատենագարանում։ Այս ձեռագրերը համեմատութեանս մէջ նշանակում եմ I MSS. կամ I. 401 և 1291. Երկրորդ յաւելուածումն թիւ 1291 իրեւ Յ. թիւ 401 իրեւ Յ. Սոցանից վերջինը թւումէ ինձ իր պետական հինը։

Սոցանից պակաս է մի թերթ, որը պարունակումէ Ստորոտութեանց մասին մեկնութեան վերջի համարը (§)։ Երկու ձեռագրերին էլ ժամանակը անյայտ է, բայց դատելով թ. 401 գրութիւնից նա տաճնեցորդորդ դարու ձեռագիր կարող է լինել։ Ես ցաւում եմ որ նկատողութիւնը պարունակելով Երուսաղէմի ձեռագրերի կատարեալ նկարագրութիւնը կորած ժամանակի աշխատանք էր։ Նոյն տարում քննեցի Էջմիածնի ձեռագրերը, բայց դատայ որ նոքա ոչինչ չեն աւելացնում թարգմանութեան բնագրի այն քննութեան վրայ, որ ես արդէն կատարել էի յենուելով Պարիզի և Երուսաղէմի ձեռագրերի վրայ։

§ 25. Այս քննութեան վրայ է հիմնւում այն բաղդագութիւնը որ ես տպել եմ ոոյն գրքի էջ 1—50-ում։ Երբ այս էջերը արդէն տպւած էին գնացի Պալիա լսած լինելով որ այնտեղի համալսարանի մատենագարանը ունի Դաւիթ Անյաղթի մի ձեռագիրը։ Այդ ձեռագրի տարբերութիւնները համեմատած մինչև այդ ժամանակ իմ բաղդագած ուրիշ ձեռագրերի հետ, ըստ որում ես նորից մի ամբողջական համեմատութիւն արի և ինչ արդիւնք ստացայ իրեւ յաւելուած կցեցի նախնթացին հանդերձ մի քանի յաւելուածներով և ուղիղ ընթերցուածներով, այդպիսով լրացրի հայերէն բնագիրը որ տեղաւորել էի վերջում։ Երկրորդ յաւելուածում ես տպել եմ նոյն այդ Պալիայի բնագիրը տրամադրելով նրան ըստ կարելոյն ճշտութեամբ հանդերձ նորա ուղարկուած բարական և շեշտագրական առանձնայատկու-

թեանց: Այդ ձեռագիրը ցանկանում եմ աւելի մանրամասն նկարագրել:

Նա բաղկացած է երկու հատորից, 130 D 92, 93. ի բաց առեալ սկզբից մի քանի տետրակներ, առաջի հատորը գրած է բամբակէ հաստ թղթի վրայ, որը լաւ յղկած է և սպիտակէ: Խւրաբանչիւր երեսի մեծութիւնն է  $10 \times 6\frac{5}{4}$  մատնաչափ ( $10 \times 6\frac{5}{4}$  inches): Գրութեան չորս տողը բունած տեղով հտւասար է գալիս մի գծական մատնաչափի: Գրքիս սկզբում դրել եմ այդ ձեռագրի ճշգրտապատկերը (facsimile): Նրա կազմը ըստ երեսյին մօտաւորապէս տամնհինգերորդ գարուց է: Մի քանի տետրակներից պակաս է կամ առաջի թերթը կամ վերջինը, կարծես նրան սկզբում կարդացել են առանց կազմի, առանձին տետրակներով: Երկու հատորներից ոչ մէկումն էլ թւական չկայ: Այն գրչութիւնը ըստ որում գրած է Դաւթի մեկնութիւնը Պորֆիրի ներածութեան մասին, և ստորոգութիւնըն ու յաղագումեկնութեանը հանդերձ մեկնութեան, չի կարող աւելի ուշ լինել քան 1300 թւականը և ոչ էլ աւելի շուտ քան 1100 թ.: Գրիչը գիտէր գրել վորք գրեր, որոնցով նա լրացնումէ գծերի միջի սահմանը: Միայն մի տեղում մօտ կէս երես գծից անցնում է գրելով խիստ մանր գրերով: Ուղղագրութիւնը այն է, ինչ որ գործնական էր իններորդ, տասերորդ գարում և ընդհանրապէս հին ձեռագրերի մէջ: Այդ կայանումէ աւելի ուշ ժամանակուայ ուղղագրութեան տարբերութեան մէջ, որք են, է, էն, էն, էտէ, էնէ, ո-նէն, օ, էտո (elaben), որոնց փոխանակ ունենք, թէպէտեռ ոչ միշտ անփոփախ: է, էն, էն, էտէ, էնէ, ո-նէն, առ, էտո: Երբեմն էրիկանիուն փոխանակ էրիկանիուն, յաճախ յտ-էտ և այլ փոխանակ յտ-էտ և այլ: Այդպէս նաև էրիէտ է գրած փոփանակ էրիէտ օրինակ 19 b. 36. ռէպ, փոխանակ ռէպ: Յարմար է յիշել նաև մի քանի պատիւներով կրնատումները մանաւանդ ամենասովորականները թի և թե փոխանակ նէն և նէն: Տպագրութեամբ արտագրել ձեռագրի կէտաղրութիւնը գժուար էր, յատկապէս այն տեսակ բարակ կէտերը, որք ցրուած են գրութեան մէջ և հաստ կէտերը: Առկայն գործ են ածած կոլոր և քառակու-

ոի մակակէտեր, իբրև ծանր և թեթև ստորակէտեր: Կոլոր ստորակէտերը յաճախ գտնւում են գծերի վրայ, ուրեմն աւելի ծանր քառակուսիները գերազանց են քան ստորակէտերը: Երկու կէտերը գրուած են մի գծի գրուածքի հաւասարութեան վրայ և եթէ դադարը աւելի երկար է՝ գծից վերև: Միջակէտը երբեմն կոլոր է, երբեմն քառակուսի և գրում է կամ աւելի սոսր, կամ գծի վերին հաւասարութեամբ: Շատ անգամ տպագրութեան պակասաւորութեան պատճառաւ իմ տպած բնագրի մէջ երկու կէտերը ներկայացնում են երկու կարճ հորիզոնական բժեր, մէկը՝ միւսի վրայ: Երբեմն էլ պատահում են երեք կէտեր: Կէտագրութիւնը լիասէս և ամբողջապէս այն պատճառաւ է յատկապէս գործագրած, որ գրածի միտքը հասկանալի դառնար: Գրութիւնը շատ տեղ միապազալ է. և կէտագրութեան ամբողջ եղանակը ցոյց է տալիս, որ արտագրութիւնը կատարուել է մի հին միապազաղ գրած օրինակից, որի մէջ ընդհարումներն են ծառայել բառերի բաժանմանը: Այլ կերպ չեմ կարող մերկնել գծի վերայ եղած բազմաթիւ երկարացումն վանկերի (Diastole) և ստորակէտերը, քանի որ այստեղ գործ են ածած ոչ իբրև յապաւումն (Elision) և ոչ իբրև երկու ձայնաւորների միմեանց հանդիպումն. (Hiatus): Վերջի բնագրի մէջ կան բառեր, որոնք ամբողջութիւն են կազմում և պէտք է միասին գրուած լինէին, երբեմն ստորակէտով բաժանուած են, օրինակ Հրենի մի քանի տեղ գրած է Հրե, Ռե: Նաև վիրները յաճախ այն բառերի հետ են ի միասին գրած, որք նրանից նախնթաց են. և երբեմն տողագարձութեան նշանը գրած է մի ամբողջութիւն կազմող բառի մէջ: Օժանդակիչ է բայց չառ անգամ միացած է իրան նախնթաց դերբայի հետ:

Չեռագրի ուղղագրութիւնը բոլորովին միատեսակ չէ և թէ նախն աստիճանի տարբեր է նկատեցի գործը տպագրել տալիս: Երաւ է կորելի է այդ տարբերաւթեան մի քանիսը արտագրողներին վերագրել, բայց պէտք է լինեն այնպիսիներն էլ, որոնց պատճառը լեզուարանական է:

Ես միայն աշխատել եմ տպագրութեամբ արտագրել ձեռագրի

բնագիրը։ Տպագրութեան համար արտագրելիս միապաղազ գրած բառերը մեծաւ մասամբ բաժանել եմ։ սակայն փորձել եմ խոյս տալ ուրիշ փոփոխութիւն անելուց։ Տպագրելով թարգմանութեան բնագիրը համաձայն Պալիայի ձեռագրին ոչ մի ջանք չեմ խնայել արտադրել այն շեշտերը որք բաւականի բնորոշիչ են։ Հազուագիւտ են այնպիսի հայերէն ձեռագրեր, որոնց մէջ այն լիութեամբ և այն խնամքով նշանակուած լինին բառերի շեշտերը։ Ակաւ գէպքերում, օրինակ 16 ա. 13 էջում, շեշտերը նշանակած են հորիզոնական գրութեամբ փոխանակ ուղղահայացի, այդ էլ եմ փորձել պահելու։ Հին հայերէն շեշտադրութեան խնդիրը գեռ ես մութ է և նոր հրատարակութեանց մէջ նոքա չեն նշանակուում։ Ես յոյս ունիմ որ հոգալով արտագրել շեշտերը գործածութեան գիւրութիւն տուած լինիմ լեզուաբանական տեսակէտից նպաստելով որոշել հին հայերէնի շեշտի բնաւորութիւնը։

§ 26. Հետեւեալում մենք գնում ենք այդ ձեռագրի բովանդակութեան ցանկը։

Առաջի հատորի մէջ։ (I) Այս հին գրիչ, թէև ոչ նոյն գրիչը որ գրել է Ա հատորը, այդ ժամանակից նորան գրել է հայերէն նշաններով յունարէն բուսաբանական անուանց մի ցանկ գիմացը գնելով հայերէն ժողովրդական գարձուածները։ (II) Նոյն գրիշը գրել է նաև Փիլոնի հին կտակարանի անուանց բառարանը։ Սորա վերնագիրն է։ Բառեր Եփրայական անունների թարգմանուած յունարէն լեզուով Փիլոնի ձեռքով, որ յաջորդ էր առաքեալների։ Սա ըստ երեսյթին Փիլոնի մի աւելի հին բառարանն է համեմատած նրանից մեր ունեցած յունարէն և լատիներէն բառարանների հետ։ Այն գրիշը որ գրել է (I) և (II) ես նշանակում եմ Ա 1-ով։

(III) Գրիշը աւելի ուշ է, մենք նրան կոչում ենք Ը. և անոտորի թղթի վրայ գրած է Արիստոտէլի «յաղագ» աշխարհի և յաղագո առաքինութեանց։ Առաջինի սկիզբը պակաս է։

(IV). Ներածութիւն Պարփիւրի գարձեալ տարբեր գրչից է, որին ես Յ եմ կոչում հին է քան Ը, բայց աւելի ուշ է քան Ա կամ Ա1.

(V). Դաւթի Ներածութեան մասին գրած մեկնութիւնը: Որս սկիզբը ծագումէ Յ.ից, սակայն որս մեծ մասը գրելէ Ա. Հատորի գրողը՝ Ա. Գրքի այդ մասը շատ է վնասուած ծխից: Դաւթի մեկնութեան վերջի մասը գարձեալ տարբեր գրչից է որ բաւական ինքնուրոյն է ես կոչումեմ նրան Ա 2: Այս գրիցը համարեա ժամանակակից է: Ա.ին և ձգտումէ նմանել յունարէն գրութեան եղանակին ձայնաւորով սկսող բառերի սկզբում աւելացնելով հագագային ձայներ:

(VI). Ստորոգութեանց վրայ գրած մեկնութեան մի հին թարգմանութիւն է գրած Ա 1 գրչից, սկիզբը պակաս է:

(VII). Եւկիդի հին հոյերէն թարգմանութիւնը՝ գրիչն է Ա 1. Երկրորդ հատորը պարունակումէ Ստորոգութիւնը և Յաղագս մեկնութեան գրիչն է հին, նուրբ և համարձակ մէկը, ես նրան կոչումեմ Ա: Քնազրի լուսանցքներին ցրուած են հայերէն զանազան նկատողութիւններ, գլխաւորապէս Ը. գրչից, քաղուած ինչպէս երբեմն կարդումենք, աիրանկների գրքերից: Ուկաւ բացառութեամբ այն բոլոր ընթերցուածները որ ես աւելացրել եմ քննական բառերի քաղուածներին (apparatus criticus) գտնում ենք աւելցրած Ը գրչից, որը երբեմն մինչև անգամ իսկական բնագիրը ջնջել է: Ա 1. գրիչը լուսանցքների վրայ և բնագրում միայն մի քանի տեղ է ուղղել, որոնք ես աշխատեցի ճշտութեամբ նշանակել էջերի ստորին լուսանցքում: Թերեւս այդ նոյն գրիչն է, եթէ իրաւ առաջի գրիչը չէ, որը զանազան տեղերում ջնջման կէտ է գնում: Ա 1. ուղղագրութիւնները պէտք է հանուած լինին հինգերորդ գարու յունարէն ձեռագուերից: Օրինակ համար այդ գրիչն է որ 19 Ե 8 'Ն ի վրայ մէկ կէտ է գընում: որից ստանումենք հետեւեալ վարիանոր, անուն ոչ ասեմ: այլ անորոշելի անուն» (δομα τέν λέγδ, ἀλλ' αόριστον ονομα) մինչդեռ բոլոր յունական ձեռագրերը կարդումեն. δομα τεν υ λέγδ, ἀλλ' αόριστον δομα: Նոյն գրիչը գրել է գլխների սկիզբը կարմրով: Կարմիր ներկով գրած մի քանի ուղղագրութիւնները չկարողացաց որոշել արդեօք Ա 1-ին պէտք է վերագրել, թէ Ը-է արել նմանուելով հին: Ը-ի բոլոր ընթերցուածները բնագրի

աղջառումն են ներկայացնում և Պալիսայի ձեռագրի արժէքը հենց նրանումէ կայանում; որ նրա բնագրի մէջ չկան բոլոր յետոյ աւելցրած միջնադարեան աղջառումները հինգերորդ դարու թարգմանութեանց մէջ: Ես տատանւում եմ նշանակելու այն տարբերութիւնը որ կային տպած օրինակի և միւս ձեռագրերի մէջ, նոքա բոլորն էլ ընդհանրապէս շատ վատ էին: Միայն վերջում աւելցրի նրանց էջերի ներքին լուսանցքներում պարզ ցոյց տալու համար թէ հայերէն ձեռագրիրը միջին դարերում գրանկական ազգեցութեան տակ ինչ աստիճանի աղաւաղուել են: Այս պարզաբանումն անհրաժեշտ էր, որպէսզի կարելի լինի յետը գնալով իերականգնել մի աւելի հին բնագիր: Նոյն խնամքը պէտք է ուզորտ լինի եթէ մէկը ցանկանայ հայերէն Աստուածաշունչը քննապէս գործադրել:

§ § 27. Այս ձեռագրի պատմութեան մասին տասնվեցերորդ դարուց առաջ ոչինչ յայտնի չէ: Այդ դարու սկզբներում նա պատկանումէ Պերո-Դի-Բեչարիզի (Pero di Beccarisi) Պալիսայի ամենայայնի ազնուական ընտանիքներից մէկին: Քիչ յետոյ սեպհականութիւն էր կազմում Թեուկտիս Ամբրոսիոսին Պալիսայի Ալբոնիսի ընկերակիցներից մէկին, որը (Theseus Ambrosius ex comitibus Albonesii) իտալիայում արևելեան լեզուների ուսումնասիրութեամբ պարապող անձանց առաջիններից մէկն էր և հեղինակ է հետեւեալ շարագրութեան. «Introductio in Chaldaicam linguam, Syriacam, atque Armeniacam et decem alias linguas. Excudebat Papiae. Ioan. Maria Simoneta Cremonen. In Cronica sancti Petri in Coelo Aureo. Sumptibus et Typis, autoris libri. Anno a Virginis partu. 1539. Kal. Martij». Ներածութեան մէջ գործածած բոլոր հայերէն օրինակները վերցրած է այս ձեռագրից և գտնւումեն 144, 156, 165, 166 էջերում: Այդ հետեւեալն է. «Antiquissimus Aristotelis, liber, Armenicis literis scriptus» (Հնագոյն մատեան Արիստոտելի, գրեալ հայկական տառիւք) որը թէսէսոս Ամբրոսիոսը յիշաստակումէ 168 էջում: Օրինակի համար 144 էջում գրում է. «In antiquissimo libro Armenicis literis scripto, in quo Porphirii Praedicabilia, et parua Aristotelis Logicalia, literis et lingua Ar-

menica scripta Eontinentur reperto». և ապա շարունակութեան մէջ տալիս է Եփրայերէն Այրբենը, որ գտնուումէ այդ ձեռագրի առաջին հատորում:

Հետեապէս նա տալիս է ընթերցուածներ Արիստոտելից և Պորֆիրից առնելով այդ ձեռագրում գտած օրինակից և մի ուրիշ գէպքում տպագրումէ մի նկատողութիւն, որ ուշ ժամանակներում մի գրիչ աւելցրել էր ձեռագրի լուսանցքի վրայ: Պատիվի համալսարանի մատենագարանում կան պահուած երեք ուրիշ հայերէն ձեռագիր, որ գտրձեալ պատկանումէին Թեսէոս Ամբոգիոսին և որոնց մէջ հայերէն տառերով գրել է իր անունը: Սակայն նոքա յետին ժամանակներից եկեղեցական գրքեր են: Սոցա մէջ շատ են ստորգծեայ լատինական բառերով բացառութիւններ, հետեապէս կասկած չկայ, որ Պորֆիրի և Արիստոտելի թարգմանութեանց մէջ եղածներն էլ նոյն գըրչինն են:

§ 28. Այժմ անցնենք երկրորդ կարգի թարգմանութեանց, այն է՝ Յաղագս աշխարհի և Վասն առարինութեան: Ցոյա հնութիւնը աւելի սակաւ ապահով է քան առաջին խմբինը և ամենահին տեղեկութիւնը, որ ունինք նոցա մասին գտնումենք արդէն 10 §-ում յիշած Գրիգոր Մագիստրոսի թղթերում: Նա խնդրումէ իր աշակերտներից յետ ուղարկել Արիստոտէլը, որ նա ուրիշ անգամ նոցա էր տուել մի ժողովածու հետեեալ վերնագրով. ո՞ի վերայ երկնային մարմնոյ և գնդաձեռութեան երկրի կամ սլասն կարգաւորաւթեան կենաց: որի մէջ վերլուծած է արտայայտուող զգացմանց յատկութիւնները և դասաւորութիւնը: Այս յիշած երկերը հաւանականօրէն էին «յաղագս աշխարհի և վասն առաքինութեանց» գործերը: Նայելով նոցա ոճին թւումեն թէ նոքա պատկանումեն ուժ կամ իններորդ գարուն:

Սակայն «յաղագս աշխարհի—թարգմանութիւնը բառացի է ոչ պակաս չափով քան ստորգութեանց թարգմանութիւնը և անկասկած թարգմանուան է մի այնպիսի յունաբէն բնագրից, որ բաւական տարբերումէ Արիստոտելի բերլինում տպագրութեան ծառայած օրինակից. սակայն ի նկատի առնելով այն հանգա-

մանքը, որ այդ երկու գիրքը ծառայել են փիլիսոփայութեան համար իրեւ բնագրեր միջին գարերում ներս են մտել բաւական մեծ թւով սխալներ: Այդ իսկ պատճառաւ տաստանուում էի տը-պել հայերէն տարբերութիւնները, որովհետեւ ակներեւ է, որ նը-րանցից մեծ մասը նոյն իսկ թարգմանութիւնից են ծագել և ես կասկածում էի, այդպէս լինելով արդեօք արժէ գործ ղրած ժամանակը: Խնչ էլ որ տպեցի վճռեցի ընտրութեամբ վարուել, ո-րովհետեւ անկարելի է շեղել այն ծրագրից, որին ես հետեւեցի Ստորոգութեանց և յաղագս մեկնութեան-ի վերաբերմամբ ուալով թարգմանութեան մի քանի տարբերութիւնները:

1891 թւի աշնան, երբ իմ համեմատութեան 51—71 էջերը արդէն տպուած էին ես պատահմամբ հանդիպեցի էջմիածնի վան-քի մատենադարանում մանրագիր մի ձեռագրի այս տիտղոսով. «Արիստոտէլ ի վերայ Աստուծոյ» բնագրի էջ 397-ից սկսած մի թարգմանութիւն 397 ե. 16. ձի կա... այս աշխատասիրութեան վերջը որ շատ գերազանց էր ես առաջուց էի հանդիպել: Ցիշ-եալ ձեռագիրը Կարինեանի Տիխիսում 1863 թ. տպած ցուցակում ունի 2050 թիւը, իսկ Վանքի ձեռագիր ցուցակում 2093 թ. Ձեռագիրը թղթից է և գրած է Աղթամար կղզում Վանայ մօտ 1223 թ. թարգմանութեան մէջ չկայ Դաւիթ Անյաղթին վերագրած լինելու յիշատակութիւն:

Այս թարգմանութեան վերջի մասի համեմատութիւնը յունա-րէն բնագրի հ'ատ ցոյց է տալիս թէ ինչքան բազմաթիւ են հա-սարուկ բնագրի մէջ ցրուած աղաւաղումները, որ տպուած են Վենետիկի հրատարակութեան մէջ և գտնում են նմանապէս միւս ըոլոր ձեռագրերում որ ես տեսած ունիմ: Օրինակի համար տպածի էջ 62—71 համեմատութեան միջի նկատողութիւնները պէտք է դուրս ձգել:

Էջ 63 նկատողութիւն 397 ե. 34. 398 ա. 1, 398 ա. 13. 398 ա. 1.

Էջ 64 նկատող. 398 ա. 14. 398 ա. 16. 398 ա. 18. 398 ա. 21. 398 ա. 22.

Էջ 65 նկատող. 398 ե. 21. 398 ե. 23. 398 ե. 30. 398 ե. 31.

- Էջ 66. նկատող. 399 ա. 12. 399 ա. 19. 399 ա. 25.  
 Էջ 67. նկատող. 399 բ. 22. 399 բ. 23. 400 ա. 1. 400 ա. 3.  
 400 ա. ե.  
 Էջ 68. նկատող. 400 բ. 12. 400 բ. 13. 400 բ. 13. 400 բ.  
 33. 400 բ. 26.  
 Էջ 70. նկատող. 401 բ. 6. 401 բ. 8. 401 բ. 11. 401 բ. 16.  
 Էջ 71. նկատող. 401 բ. 28. 401 բ. 29.  
 Բոլոր այս էջերում յիշեալ բնագիրը համաձայն է յունարէնին:  
 Եթի քանի ուրիշ էջերում այդ անհրաժեշտութիւնը անհետա-  
 ռումէ իր տպած նկատողութեանց շնորհիւ. օրինակի համար  
 ետևեալները.  
 Էջ 62 397 բ. 18. «Այսինքն զի . . . . սակայն ոչ զգոյացու-  
 թիւնն»] Այսուեղ հայերէնը տարբերութիւն չի ցոյց տալիս:  
 tē mén theíā dynámei preonta kataballómenoi lógon, ú mén  
 tē ge ousia խօսքերը թարգմանած են «յէսս զաստուածային  
 զօրութեան նշանակ, սակայն ոչ գոյացութիւնն» որ ունի  
 "divinam potentiam significantes (symbolómenoī) non autem  
 essentiam," խօսքերի նշանակութիւնը, կամ սա կարող է  
 իսկականի բացատրութիւնը լինել:  
 Էջ 63. 398 ա. 10. ս կ - ս չ] Այսուեղ ձեռագիրը բաց է թող-  
 նում ոչ սակայն կարօտումէ ερι tū megðlou basileós խօսքե-  
 րին, որ պիտի կարգացուի երկրորդական նախադասութեան  
 մէջ all' hóion բառերից յետոյ:  
 Էջ 64. 398 բ. 5. epitelein há búloitð Այսուեղ ձեռագիրը ունի  
 epiteléin,  
 Բաց է թողել há búloito.  
 Էջ 65. 398 բ. 26. Այսուեղ ձեռագիրն ունի éstí hoís  
 kai enantias kaitoi tēs prōeēs endéseōs tis kinēsin heteroias  
 genoménēs=է և ներհակ մննաւանդ առաջին շաղկապին  
 առ ի շարժութիւն միւսոյն լինելով:  
 Էջ 66. 399 բ. 12. Այսուեղ ձեռագիրը այսպէս է թարգմա-  
 նում կարծես բնագիրը. ունենար հետևեալը հóder usamōs  
 estin empódion, úte kinéi pros diánoian hémas apistios—որ

զբնաւն ունի և ոչ է պարտ շարժել մեղ առ ի մտածութիւն թերահաւաստութեան:

Էջ 67. 399 բ. 18. Այսուեղ ձեռագիրը ունի ոճոն կօսմօ և քաղաքացիութիւնը կայանում է փոփանակ սիտեսօմեոտ—զի հատուցանէ արօնօն:

Էջ 68. 400 բ. 18. Այսուեղ միակ տարբերութիւնը կայանում է փոփանակ սիտեսօմեոտ—զի հատուցանէ արօնօն:

Էջ 68. 400 բ. 29. Այսուեղ ձեռագիրը թողնումէ ծոտօ—լինել սակայն ուրիշ տարբերութիւն չունի:

Էջ 69. 15. Զեռագրերը թողնումէ պատուկ և աւերամոս «անսահման», բայց ուրիշ փոփախութիւն չունի:

Էջ 69. 400 ա. 19. Զեռագիրը փոխանակ առ տօն կարոն—առ ի պաղոյն, ունի երի երի առ տօն կարոն վասն պաղոցն, սակայն էական ուրիշ տարբերութիւն չունի:

Էջ 70. 401. 9. Զեռագիրը ունի այտան—պատճառ փոխանակ սիստան—գոյացութիւն, սակայն մնացած մասում համաձայնումէ յունարէն բնագրի հետ:

Էջ 71. 401. ե. 23. Զեռագիրը ունի. Estin uk allo ti plēn ék theū—ոչ ումեքէ գիտելի բայց միայն աստուծոյ.

Էջ 71. 401 բ. 26. Զեռագիրը այսուեղ համաձայնէ սովորական բնագրի հետ միայն տիմծոս+պատուհասին բառի առաջին դնումէ նոմոս կամ սակա իրաւացն:

Մի քանի էջերում աստղանշանով որոշելեմ հայերէն հասարակ բնագրի սխալները. ձեռագիրը տալիս է մեղ ուղիղ բնագրի, օրինակ էջ 66. 399 ա. 19. pherōnimos թարգմանած է բառացի քեր. անունաբէս, որի փոխարէն հասարակ ձեռագրերում անգրագէտ գրիներից մէկը գրել է՝ «քարերարութեամբ» նոյնպէս էջ 66. 399 ա. 31. ձեռագիրը կարդումէ մնշան ակէ՝ որը ես գուրս թողի բնդունելով որ այդ սխալ է մտած հասարակ բնագրից: Նման է նաև էջ 400 բ. 23 (էջ (8) ձեռագիրը ունի «միւռմ» փւրումն ի տեղ, դարձեալ գուրս եմ ձգել իմ նկատագութիւնից:

Այս թարգմանութեան ուրոյն բնագրիրը, որ պահուած է այս

ձեռագրում՝ ուղղել են սխալներից ուշ ժամանակի արտագրողները. օրինակ

Էջ 398 ա. 27 *asias θωρακίνιած է իբր սիաս.*

Էջ. 398 բ. 9. *κίνείν θωρακίνιαծ է իբր κτίνειν.*

Էջ 401. ա. 11. *tēn gēn θωρακίնιած է իբր պλέγēn, προζέτοπε այլապէս ես չեմ կարող բացազրել ձեռագրի մէջ այդտեղում եղած գա անի ի վրառը:*

Չնայած այս և այն անկատարելութեանց յամենայն գէպս կարծում եմ, որ այդ *թωρακίնιութիւնը* արտացոլեցնումէ ստոիկեան այս *հետաքրքիր աշխատութեան* մի բաւականի հին բնագիր և այդ *նկատումէ* մանաւանդ նրանից, որ նրանում մի երես առաջիս է նոյնապիսի ընթերցուածներ որ ըստ երևոյթին ունեցել է նաև *Ապուլեյոսը*:

§ 29. Յաղագս առաքինութեանց՝ սաոր աշխատութիւնը *հաւանականօրէն հայերէն լեզուով թωρακίնուել է այն ժամանակ երբ թωρακίնուել է «յաղագս աշխարհի»: Խմ էջ 72—75 տպած համեմատութեան համար ձեռիս չունեցայ մի աւելի լաւ հայերէն բնագիր քան վենետիկում տպած հրատարակութիւնը, որից էականապէս տարբեր չգտայ ոչ Պալիսայի, ոչ Երուսաղէմի, ոչ Էջմիածնի ձեռագրերը: 1892 թւի գարնանը Վատիկանի մատենադարանում գտայ ես մի աւելի հին ձեռագիր քան ես առաջ էի ունեցել, Cob. Arm. III. bol. 456 V—fol. 461 ր. Այս ձեռագիրը գրած է գեղեցիկ կերպով ազնիւ մագաղաթի վրայ և պատկանումէ տասներեքերորդ դարու առաջի կէսին. ուղղագրութիւնը և գրողի կողմից աղատ թողած տեղերը ապացուցանում են որ նա իր առաջի բնագիրը չի կարողացել կարգալ և որ արտագրութիւնը կատարուել է մի շատ հին օրինակից: Սակայն այս Վատիկանեան ձեռագրի բնագիրը շատ քիչ է տարբերվում տպածի բնագրից: Միայն երեք էցերում կարող է նա ուղղել Վենետիկի հրատարակութեան բնագիրը: Դոքա հետեւեալն են:*

1250 ա. 23. *kath' hēn . . . apolaúseis]* Վատիկանեան բնագիրը ունի. Kath hēn hairúntai tās hēdonás kolyontos tú 10-gismū.

1250 Ե. 18. Վատիկանեան ձեռագիրը կարգում է «առ իր պարբերեալ», որի մասին ես նկատել էի, որ Վենետիկի տպագրութեան բնագիրը սխալ է:

1251 Ա. 23. Վատիկանեան ձեռագիրը kloγ' ontos ի առաջին չի գրում ու որով համաձայնումէ յունարէն բնագրի հետ: Այս երկու աշխատութիւնները «յաղագս աշխարհի» և «յաղագը առաքինութեանց» տպուած են Վենետիկում Կորիւնի, Մամբրէի և Դաւթի հրատարակութեան մէջ էլ 603—635. Զեռագրերի մէջ նոցա տիտղոսն է. «Թուղթ Արիստոտելի իմաստնոյ առ արքայն Աղէքսանդր, պատմութիւն յաղագս աշխարհի և յաղագս առաքինութեանց»: Վենետիկի երկու գործերին հրատարակութիւնը ևս հիմնուած է վեց ձեռագրերի վրայ որոնցից երեքը բոլորագրով են և ունին հետեւեալ թւերը 245—1319, ԱԽէ—1599 և ՊԾԹ—1411. Նոցա հրատարակող Մխիթարեանը ոճի վրայ հիմնուելով վերագրումէ հինգերորդ գարուն, Հայոց գրականութեան ոսկեայ դարուն: Սակայն ես նրանց աւելի ուշ եմ դնում: Յամենայն գէպս ոչ այն անձը որ թարգմանել է Ատորոգութիւնք և յաղագս Մեկնութեան և ոչ էլ այն որ թարգմանել Պորփիրի Ներածութիւնը նոյն այս գործերի թարգմանին է: Այժմ դարձնենք մեր ուշքը ներածութեան թարգմանութեան վրայ:

§ 30. Ներածութիւնը հրատարակուած է նախնիւցում յիշած 1833 թուի Վենետիկի հրատարակութեան մէջ և քառասուն տարի աւելի շատ տպագրուած էր նաև Մադրասում ապրող Հայերի ձեռքով: Վենետիկի ներածութեան բնագիրը հիմնուած է վեց ձեռագրերի վրայ, որոնցից երիւութը բոլորագրով են և ապա ծագում են 1313 և 1411 թւականներից: Դաւթի ներածութեան մասին գրած մեկնութիւնը արտատպուեց դարձեալ նոյն ձեռագրերից, էջ 251—356: Այդ մեկնութիւնը, ի բաց առեալ սկիզբը և վերջը գուրս է գրած Ticeinus ձեռագրի մէջ առաջի գրքի կողմից և մենք ունինք նրա ամբողջութեան համար մի բաւական գիւրընթեռնելի բնագիր: Նոյնը չէ կարելի առել նաև ներածութեան մասին: Իմ տեսած բոլոր ձեռագրերի

մէջ միայն Ticinու ձեռագրի Յ<sup>1</sup> գրիչն է ամենամաքուրը և ինձ ամենից շատ օգնեց մաքրելու բնագիրը արտագրողների սխալներից։ Սակայն դժբախտաբար հէնց միայն այդ է ներփակում վենետիկի տպած էջ 227—249 էջի հրատարակութիւնը։ Հրատարակութեան վերջի տասը էջում 240—256-ում այդ չի պարունակում։ Ուստի տպած բնագիրը համեմատեցի տասնչորրորդ դարու Տիխիսի մի ձեռագրի հետ և Պարիզի մի ձեռագրի հետ (Gont. Armén. № 106), մի լաւ գրած Եջմիածնեան օրինակի հետ և 1793 թ. Մադրասում լոյս տեսածի հետ։

Վերջինս տպագրուած էր Պարսկաստանի Սպահան քաղաքից բերած մի հին ձեռագրի վրայ։ Այդ աղբիւրների համեմատութիւնը համոզեց ինձ, որ թարգմանութիւնը բաւական փոփոխութեան է ենթարկուել և մինչև անգամ ուղղել են համաձայն արևմբեան աղբիւրների։ Իմ աշխատութեան 76 և այլն էջերում տուած համեմատութիւնը կատարելիս, ես իրբե ուղղեցոյց եմ ընտրել։ Համեմատութեան մէջ միայն տարբերութիւնները այն ընդունել ինչ բոլոր բնագրերում համաձայն են։ Սակայն հոյերէն բնագրերի ամենաընտիրներն էլ ծագում են յունարէն ձեռագրերի վատ ընտանիքից, ուստի ես չհամարձակեցի այդտեսակ բաներով իմ հատորը ստուարացնել, թէև իմ սկզբնական միտքը այդ էր։

Այդ թարգմանութեան ժամանակի մասին ապահովապէս մի բան ասել դժուար է։ Հուանականօրէն նու միենոյն ժամանակամիջում և նոյն անձի ձեռքով է կատարուել, որը յունարէնից թարգմանել է արօ phonēs David։ Թարգմանութիւնը կատարեալ բառացի է նման Ստորոգութեանց և Յաղագո Մելիութեան թարգմանութիւնները, ոտկայն ունի մի քանի քերականական առանձնայատկութիւններ, որք մեզ ստիպում են նրան ընդունել ոչ նոյն անձի, այլ ուրիշի գործ։ Ես համամիտ եմ նրան եօթնելորդ դարուն վերագրել, սակայն եթէ մէկը լաւ հիմունքներով կարողանար նրան դաւիթ փիլիսոփային վերագրել, մի ա-

ասնձին հակառակ բան չէք գոնիլ, ոչ լիզուի կողմից, ոչ ոճի կողմից:

§ 31. Դաւթի Ներածութեան մասին գրած մեկնութեան հայերէն թարգմանութիւնը արժանի է ուշադրութեան առնելու յունարէն ձեռագրերը լրացնելու ժամանակ նրանից մի քննական բնագիր սպառառատելիք: Յերլինում՝ տպած Արիստոտէլի հատոր չորրորդ, էջ 16 և այյն համառօտ բնագիր ունի. Համառօտ է այ թէ խառութեան սպառառառաւ, այլ որովհետեւ շատ բան բաց է թողած ինչ որ այժմ ունինք յունարէն բնագրի մէջ: Ա. յնպէս որ, եթէ վերցնելու լինինք Բերլինում տպած Արիստոտելը, կը գտնենք հետեւեալ դուրս թողած մասերը:

Brandis Scholia, Berlin Aristotle. vol. IV.

Էջ 16 b. 43-17 a. 4 kephalaia dé ... éehusin] թողած է.

Էջ 17 a. 9. ho skopos] թողած է.

Էջ 17 a 10-16 kai héxin .. légesthai] թողած է.

Էջ 18. a. 19. eylogos] թողած է.

Էջ 17 a. 24, 25. Bulomenos ... ekei] թողած է.

Էջ 17 b. 3-5 hos hoton ... onoma] թողած է.

Էջ 17. b. 19-22. kaigar dia ... tò sy'ngamma] թողած է.

Էջ 17. b. 25, 26. hosper ... ginoskomen] թողած է:

Այդքան սահմանափակ տեղից այդքան օրինակներ յառաջ բերելով ապացուցանութինք, որ Յրանդիսի բնագիրը մի զանգուած է կազմուած ուրիշ մեկնութիւնների քաղուածների գումարումից: Մինչդեռ հայերէն մեկնութիւնը մեծ հաւանականութեամբ ամբողջութիւն է կազմում և բոլի մի քանի գուրս թողած տեղերից ամբողջապէս բառ առ բառ թարգմանութիւն է յունարէնից և շատ նման է սուրբութեանց և յաղագս մեկնութեան թարգմանութիւններին:

§ 32. Այս գրքի նախինթաց համեմատութեան մէջ առաջին յաւելուածի էջ 46 ըւմ մի ասալանշան էի զրել նշանակելով իմ կասկածս յինի թէ հայերէն բնագիրը աղաւաղուած լինի: Ուստի և Պորֆիրի մեկնութեան համեմատութեան մէջ, որ գտնւումէ էջ 76 մինչև 87 այդտեսակ ասալանշաններ շատ են:

Ես խնդրում եմ այն ընթերցողից, որ ձեռքը պիտի առնի իմ գործը համեմատութեան համար վերցնի յունարէնի այն հրատարակութիւն, որ ևս եմ ունեցել: Այլապէս խիստ ձանձրալի և անօգուտ կը լինէր շարունակ յիշել միքանի հրատարակութիւններ: Իմ բոլոր ջանքը կայանում էր նրանում լոյս ափոել յոյն բնագրերի վերջին պատմութեան վրայ: Ստորոգութիւնքը և յաղագս մեկնութեան կարող ենք հայերէնի միջոցով որոշել և տալ նրա ճիշտ բնաւորութիւնը համաձայն նրա հաւանական չորրորդ դարու բնագրի, այն էլ պարզ և ճիշտ եղանակով: Քանի որ մենք մեր առաջ ունինք այդ գարում ծագած ձեռագիրը:

§ 33. Վերջում պարտականութիւն եմ համարում շնորհակալութիւն յայտնել այն անձանց որոնք աջակցեցին ինձ գործիս մէջ: Ամենից առաջ և գլխաւորապէս ուսուցչապետ Մարգոլիութն էր (Professor Margoliouth) որ ինձ յակեց սովորել հայերէն և նշանակեց այն գործերը որ կարելի է լրացնել հայերէնի ուսումնասիրութեան միջոցաւ: Շատ շատ հայ բարեկամների եմ մասուցանում իմ շնորհակալութիւնը. Արժան. Յ. Պարսնեանին Մանչեստրում որը օգնեց ինձ գրուածս մաքրել տպագրական սխալներից, ուստի նրան յատկապէս երախտապարտ եմ: Այս առաջին գիրքն է որ հայերէն տառերով տպագրեց Կլարենդոն մամուլը (Clarendon Press) իսկ տպագրութեան համար արտագրել էի Պալիայի ձեռագիրը: Ամենայն հոգ տանելով հայերէն բնագիրը ըստ կարելւոյն սխալներից ազատ պահել վախենում եմ: Ջինի թէ յունարէն վկայութիւնները անուշաղիր լինեմ թողած և ոչ ըստ արժանոյն ուղիղ գրած: Իմ շնորհակալութիւնն եմ մասուցանում Երուսաղէմի և Լոմիածնի հայ վանքերին այն պատրաստականութեան համար, որով նոքա իմ տրամադրութեան տակ զրին իւրեանց մատենագարաները և նրանքառեցին ինձ հայերէն բնագիրը համեմատելիու: Իմ յատուկ շնորհակալութիւնը Պալիայի համալսարանի գիտնական մատենագարանապետին, որ նա այնքան բարի եղաւ իմ ցանկաւթիւնը կատարելու ուղարկելով իրանց միակ հայերէն ձեռագիրը բոդ-

լեյան մատենագարանին (Bodleian Library) որոեղ եւ կարողացայ նրանից օգտուել՝<sup>4</sup>:

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՑԱՆԿԻ:

§ 1. Հայեացք գործիս վրայ և եթէ անհրաժեշտ է վերագանգնել մի անխախտ հայերէն բնագիր:

§ 2. Պայմաններ որոնցից կախեալ է բաղդատութեան արժանիքը

§ 3. Ժամանակ և հեղինակութիւն «Ստորոգութեանց և յաղաղագս մեկնութեան» հայերէն թարգմանութեանը:

§ 4. Հարցեր որոնք առաջ են գալիս յիշեալ գործերին կցած հայերէն լեզուով մեկնութեանց մասին:

§ § 5. 6. Ոճից ստացած փաստերը ցոյց են տալիս, որ այդ գործերը և թարգմանութիւնը և մեկնութիւնները միաժամանակ են կատարուած:

§ 7. Ներքին փաստեր թարգմանութեան ժամանակի համար:

§ 8. Հայերէն ձեռագրերի յիշատակարանների փաստերը:

§ 9. Դաւիթ Անյաղթին վերագրած թարգմանութեանը և մեկնութեանց ցանկը:

§ 10. Փաստեր հին հայ հեղինակների՝ Ստեփանոս Սիւնեցու և Դրիգոր Մագիստրոսի կողմից:

§ 11. Երբ էր ապրում Դաւիթ Անյաղթը: Վալենտին Ոռղէի կարծիքը:

§ 12. Փաստ հին հայերէն «գիրք էակաց» գրքից:

§ 13. Ստորոգութեան և յաղագս մեկնութեան մասին գրած հին հայերէն մեկնութեան հեղինակութիւնը հանելուկ է: Նոքաչն կարող Դաւիթ Անյաղթին վերագրուել: Այդ մեկնութեանց յատկութիւնը:

§ § 14, 15, 16. Այդ մեկնութեանց մասին հաւանական են. թաղրութիւններ:

1. Ծան. Թարգ. Թէև սկզբում մտագիր էինք գործիս միայն մի մասը թարգմանել, բայց վերջը աւելի համոզուելով նրա կարեորութեան մէջ վճռեցինք ամբողջ յառաջարանը (Prolegomena) անփոփոխ թարգմանել.

§ § 17, 18. Այդ մեկնութիւնը ընթանալով թարգմանութեան-  
չեա հինգերորդ դարուն են պատկանում:

§ 19. Նոքա հաւանակօրէն հին հայերէն ոչ քրիստոնեայ թարգ-  
մանիների շկոլայից են դուրս եկել:

§ 20. Փաստերի ամփոփումն: Յաղագս մեկնութեան հին հայե-  
րէն բնագրի ազգակցութիւնը բոետիոսի գործ դրած բնագրի հետ:

§ 21. Հին հայերէն թարգմանութեան հաւատարմութիւնը:

§ 22. Ստորոգութեանց և յաղագս մեկութեան հայերէն հին  
թարգմանութեան բնագրի մասին:

(ա) Վենետիկի տպած բնագրի և նրա ձեռագրի աղբիւրների  
մասին:

§ 23. (բ)Միւս ձեռագիր աղբիւրների մասին: Պարիզի ձեռագրեր:

§ 14. Երուսաղէմի ձեռագրեր:

§ 25. Պալիայի համալսարանի մատենագարանի Codex Ticinus:

§ 29. Այս ձեռագրի պարունակութիւնը և յատկութիւնը:

§ 27. Այդ ձեռագրի պատմութիւնը: Theseus Ambrogius:

§ 28. Յաղագս աշխարհի և յաղագս առաքինութեանց թարգ-  
մանութեան մասին: Հայերէն բնագրի և ձեռագիր աղբիւրի ան-  
կատարելիութեանը:

§ 29. Յաղագս առաքինութեանց ի թարգմանութիւն:

§ 30. Պորֆիրի ներածութեան թարգմանութիւնը: Նորա Վե-  
նետիկի և ուրիշ ձեռագրերը: Նորա Ժամանակը:

§ 31. Դաւթի ներածութեան համար գրած մեկնութեան  
թարգմանութեան մասին:

§ 32. Իմ՝ ձգտումը այս համեմատութիւնը կատարելիս:

33. Երախտագիտութիւն գործիս կատարելուն օգնողներին: